

Ո՛հ, մայրիկ, ի՛նչ գեղեցիկ բառ, այս ժամանակս առ՛հմ փռեցէ :

Շղատակին տարուծութիւնն օրըստօրէ կիզող էր, և սարսափելի հիւանդութիւնը, մարմացան և տիրեց զհիմնական մէջ :

Մականթ ոչ ոք ամենատուր ըլլալու վրայ կը խօսէր, և ոչ մէկուն քաջաստուծութիւնը կը մոռագէր : Այլ երբ զթուծութիւնն վնասի ու հրամայեց ժողովրդեան այսքան զոհից վերջ տալ, և երբ ամբողջապէս եւս ընդդիմադրութիւնն արեան ճապարհէ և արտատուայից քանդուում առաջ պիտի բերէր, Մանիմ՝ Ս. Մարկոսի հրապարակին մէջ ժողովից քաղաքային պահպանմանը, և սրտատու խօսքերով հարցուց թէ արդեօք ամէնքն ալ վստահ են իրեն վրայ :

Ամենքն ալ պատասխանեցին, այո՛, այո՛ — ամէնքը կու լային :

Մանիմի որտիմ բարախմառէմ դեռ եւս ամբաժան էր զհիմնական գոյութիւնն : Տեսոյ դիկտատորն վրայ բերաւ և ըսաւ մուղաձայն .

— Ի՛նչ որ ալ ըլլայ, այսպէս ըսէք. «Այս մարդը խաբուեցաւ» — երեքը մի ըսէք. «Այս մարդը խաբեց զմեզ» :

Լեռն և իմացաւ որ մուսաբեկելոյն կիմաց լալ տները շինմանու վրայ էր, մրկելայոյզ ալեաց զօրութեան յաղթունելով : Քաջուեցաւ ի զլայտն և յուսահատաբար լալով մարեցաւ իմկաւ :

Քաղաքը յետիմ աստիճանի թշուառութեանց մէջ էր : Օրուան մը մէջ մաղձացաւ հարուանելոց թիւն հասաւ մինչեւ 402. և օրուան մէջ քաղաքին վրայ կը տեղային զրեթէ հազար ունմբեր, հիթէ հաշուեմք որ յուլիս 29էմ մինչեւ օգոստոս 22 իմկան 23,000 ունմք :

Ղեմետիկ, զօրկ և թափուր յարեմէ և յարծաթոյ, ամօթի էր :

Եւ երբ օրուան մը համար իսկ ուտելիք մնացած չէր, Մանիմ՝ թշմամոյն յաջող բաղդին առչել խոմարհեցաւ և դիկտատորական իշխանութիւնը յամենց քաղաքապետութեան :


Մանիմի թղթոց մէջ գտնուեցան մի քանի տողք, որք իրեն համառօտութեան մէջ կը բացատրեն այն վայրկեանն բովանդակ և յետիմ մեղութիւնը : «Սպառնցան միանգամայն ուտելիք, վառօդ, ստակ և յոյս» :

Վեցետիկ՝ վերջիս
ժամից հետեւ է, ետեւ
Նառատան՝ տիկին,
Անդաբ՝ կարուած եւ :
Մողաճաւոր՝ կտաղած՝
Ստառիկ՝ զայրածայ :
Կը զպիտիկ եաց :
Կաճերիկ՝ վերայ՝
Մուլ Ի ծաւ գերմակ
Մառանի գրուակ :

Ղեմետիկ իւր կապտագոյն ջրոց մէջ կը մեռնէր : Արեգակմանդորրաւէտ լճակին մէջ մտնելով հրե-

զէմ շողիմբուր մէջէմ, Ղեմետիկ գեղեցկութիւնն մէջ կը տողորէր այնպիսի թաւածր անոնութիւնն մը և սրտայոյզ քաղցրութիւն՝ որք կը տեսնուիմ օրհասական իրաց վրայ :

Օգոստոս 24ին քաղաքապետութիւնն դաշնագիրը ստորագրեց Աւստրիական իշխանութեան առչելու խիստ դաշինք պարտելոց համար . բացարձակ հպատակութիւն . քաղաքն, հասարակաց շինուածոց, զինուոց և պատերազմական միջոց ամսիչական գրաւում . արտաքսումն ըրող օտար զօրապետաց և զօրաց . արքոր քառասուն քաղաքացիաց : Նրեք օր ետքը Մանիմ և թոմարգէոյ ուրիշ արքորից հետ թողուցին դիցազմացեալ քաղաքը, որ տասնութօթը ամիս իւր հոգալոյն մէջ հաւաքեւր էր լատիմ ոգոյն ըովանդակ սեծվայնելութիւնը :



ՈՒՍՈՒՄԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱՆԱՆ ԲԱՐԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. տես էջ 325)

Բ

ԲՆՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՋԱԿԱՆ ԲԱՐԱՆՈՒՆ

Գ Լ Ո Ւ Ե

Չայնախօսութիւն

(Lautehre)

ԱՅՍ և յալորդ է, ո, օ ձայնաւորն երուն կրած փոփոխութեան վրայ խօսելու սկսելէ առաջ՝ կարելոր է նախ ակնարկ մը արձակել այն զրբերուն վիճակին վրայ ընդհանրապէս :

Արդի մեր բաղմաթիւ բարբառներուն մէջ է, է և ո, օ զրբերուն տարբերութիւնը առհասարակ կորուած է . այնպէս որ այժմ երկուքն ալ հաւասարապէս կը համապատասխանեն երկրպական օ, օ ձայններուն, որոնք սովորաբար կը ներկայացնեն հայերէն է և օ տառերով՝ շիթութեան և թիւրիմացութեան տեղիք չտալու համար : Բայց հարաւային Հայաստանի արդի մի քանի բարբառներուն մէջ այս սովորական և աւելի հասարակաց օ, օ (է, օ) ձայններուն դէմ կան ուրիշ երկու երկբարբառներ, զորս սովորութիւն է ներ-

կայացնել եւրոպական լե, ու ձեւերով. իսկ այստեղ կը ներկայացնենք զանոնք և եւ ու տառերով: Այս բարբառներուն մէջ սակայն սոյն եւ ռ ձայները կը մնան միայն չեղտեալ վանկի մէջ, իսկ անշեշտ վանկի մէջ կը վերածուին հ-ի, օ-ի. այսպէս օրինակ, կ'ըսուի աներ, փուս, բայց աներներ աներներով, փուսեր, փուսերու, և այլն: *Տես Этюды по армянской диалект. I. Усербетанг. Уполном 1897. էջ 32-42:*

Եթէ բոլոր այն բարբառները (ինչպէս նաեւ մեր ներկայ երկու զբոսկան բարբառները) որ տարբերութիւն չեն դնել եւ, կ'ամ n, օ գրեւուն մէջտեղ, դնենք մէկ կողմ իբր առանձին խումբ, իսկ միւսները՝ որ այդ երկու ձայներու մէջտեղ զանազանութիւն կը մտցնեն, դնենք միւս կողմ իբր ուրիշ առանձին խումբ, Սուշավայի Հայ բարբառը պիտի բռնէ այդ երկու խումբերուն մէջտեղը: Իրաւ է թէ սոյն բարբառը n և օ գրեւուն մէջ տարբերութիւն չի ճանչնար բնաւ, բայց ասոր Հակառակ շատ որոշ կերպով և, ինչպէս յետոյ պիտի ցուցնենք արդէն, Հարաւային Հայաստանի բարբառներէն աւելի լաւ կը զատուանէ և եւ ձայները, առաջինով իմա, նայով լե երկբարբառը, իսկ երկրորդով լոկ պարզապէս օ, ճիշտ ինչպէս Հարաւային Հայաստանի բարբառներուն մէջ: Երբ իսկ եթէ Հայաստանի Հարաւային բարբառները միայն չեղտեալ և կը ճանչնան, կամ ուրիշ խօսքով միայն բառին վերջին վանկի եւ կը պահեն, ասոր Հակառակ Սուշավայի բարբառը չեղտի Հետ կապակցութիւն մը չունիւնիր. և ոչ միայն բառին վերջին վանկին, այլ և առաջին, երկրորդ և այլն գտնելու մէջ կրնայ և գտնուիլ: Օրինակ՝ դարեգամ՝ տարեկան. սերդեմբեր՝ սեպտեմբեր. քերտահալար՝ քերտահաւառ. սեղան՝ սեղան. անենկի՞ն՝ ամենեւին. արեգագ՝ արեգակ. քարեգամ՝ բարեկամ. արեգեք՝ արեւելք. և այլն:

Երբ իսկ վերջին վանկին մէջ և ունեցող բառ մը (որ ի Հարկէ չեղտեալ է) Հոգովման կամ ամանցման ժամանակ (երբ ե-ին չեղտը կը Հեռանայ) կարող է պահել ուղղականին եւ. օրինակ՝ անդրեկի՝ անդրեւոյ. քերպեկա՝ քերպեկանայ. քելեր՝ քելեր. քաղցերի՝ պատկերի. սեղեկա՝ ճեղեկա՝ սեւանայ. նեղանայ և այլն: Ինչ որ բոլորովին Հակառակ է միւս բարբառներուն ձայնական օրէջներուն:

Այսպիսիքան առնելու զիտաւոր կէտն այն է որ մեր նշանակած բարբառներուն մէջ ե-ի պահպանութիւնը, ինչպէս նաեւ անոր յարակցութիւնը չեղտի Հետ, Հաստատ է և ընդհանուր. Հին Հայերէնի բոլոր չեղտեալ

ե-երը առհասարակ և մնացած են, խիստ առկա բացառութեամբ. իսկ սեռականի կամ ամանցման ժամանակ ե-ի կ'դառնայ ամէն բառի Համար ընդհանուր է: Մինչդեռ Սուշավայի բարբառին մէջ ե-ի պահպանութիւնը կամ փոփոխութիւնը չափազանց կամայական է և առանց բնաւ մասնաւոր կանոնի: Այնպէս որ եթէ մէկ կողմէն ունինք ութսուն բառ՝ ուր զբարբառի եւր մնացած է ե, միւս կողմէն ունինք վաթսուն և չորս ուրիշ բառեր՝ որոնց մէջ եւր ե-ի փոխուած է:

Նմանապէս կան ամանցներ՝ որոնք արմատին եւր անաղարտ պահած են, բայց աւելի բազմաթիւ են այն ամանցները՝ ուր արմատին եւր ե-ի վերածուած է, առանց ինչպէս ըսինք՝ մասնաւոր կանոնի մը: Գալով Հոգովման ձեւերուն, այստեղ ալ նոյն կամ հայտնաբերութեամբ՝ մէկ կողմէն կան քաղցերի՝ պատկերի, անցքեկի՝ անճրեւոյ և այլն, իսկ միւս կողմէ քերեւ, քերեկի, ճեր (ձեր), ճերի և այլն. մինչեւ իսկ միեւնոյն բառին Համար կարելի է երկու ձեւերն ալ Հասարակօրէն գործածել:

Ինչ է այս կամայականութեան պատճառը: Այնպէս կը թուի թէ Սուշավայի բարբառն կապած է աւերող ժանրութիւն մը նկատել եւ, ե ձայներուն կրկնութիւնը և խորշելով առաջինէն կը ջանայ վերջինը միայն պահել և ընդհանրացնել, իսկ առաջինը փոխանակել երկրորդով, ինչպէս որ կատարած վերջացուցած է արդէն n և օ ձայներուն Համար: Այս մեկնութեան Համաձայն է նաեւ այն կէտը՝ որ Հին Հայերէնի ե ձայնը չնչեւ տեսներ բնաւ վերածուած ե-ի (բացի երկու բառէ միայն, ինչպէս յետոյ կը տեսնենք), այլ մասնաւոր անփոփոխ պահուած: Բայց որովՀետեւ այսպիսի ձայնական փոփոխութիւնները միտամտանակ և յանկարծակի չեն կրնար կատարուիլ, այլ մեղմով և յալորդաբար, ուստի և փոփոխութիւնը եղած է մասնական կամ նաեւ կամայական:

Եւ ձայնին կրած փոփոխութեանց մասին ամփոփելով ուրեմն մեր մինչեւ այժմ բառնենք և աւելցնելով անոնց վրայ ե-ին մասնական փոփոխութիւնները, կը տեսնենք թէ այդ ձայնը:

1. Բառի մէջ շատ տեղ կը մնայ ե. օրինակ սեր՝ խիտ, սերտ. սեր՝ սեր կաթի. վնց՝ 6, դաշեղ՝ տաշեղ. սզեալ՝ եկեղեցւոյ զգեստ. քեզեր՝ ընկեր. հետանայ՝ Հեռանայ. արեղմե՝ ստեղծել. քեխ՝ պէխ. մեխակ՝ մեխակ. մեղրը՝ մեղր. քերք՝ բերք. գեղիմ՝ գետին. դրքդտեր՝ դստեր, աղլկան՝ անհամփեր՝ անՀամբեր. ձեձ՝ ծեծ. ձեձի՝ ծեծի. մեձ՝ մեծ. արեգագ՝ արեգակ. սանգ՝ սանդն. աղագերդ՝ աշակերտ և այլն:

2. Բայց շատ սնգամ ալ կը փոխուի ե-ի. օրինակ՝ խալիկիս՝ խարերայ. ձեձի՜ ծծծել՝ աքհստը՝ սկեսուր. քերամ՝ քերամ. քարչիկի՝ գարչելի. ներ՝ ներ. դեա՝ դեա, տակալին. յեա՝ լեան. ցմեա՝ ձմեան. ձեքը՝ ձեռն. քե-րգզման՝ գերեզման և այլն:

3. Ե քառին սկիզբը կը դառնայ կամ է և կամ յէ (Գերմ. յե):

Ե ունեցող քառերն են. երանել՝ երազել (թէ եւ կա միեւնոյն ժամանակ յերազ՝ երազ)՝ երփրնալ՝ երգնուլ (իսկ միեւնոյն ատեն յեր-դում՝ երգումն). երեգ՝ երէկ. երեա՝ երես. երսուե՜ 30). երեպել՝ երես առնել. երերալ՝ ե-րերալ. երեվնալ՝ երելի. երրալ՝ երթալ. եր-գոս՝ երկու. երգոչափի՝ երկուշարթի:

Յէ ունեցող քառերն են. յեզ՝ եզն. յէնել՝ ելանել. յերգարաթ՝ երկրայարթ. յեգեղեցի՝ եկեղեցի. յեղանագ՝ եղանակ երգի. յերխ-գորս՝ եպիսկոպոս. յեք՝ եռք մարմնոյ. յեւ՝ ես. յերազ՝ երազ. յերանել՝ երանի. յեփ՝ երբ. յերաւում՝ երգումն (իսկ երփրնալ՝ երգնուլ), յերեկելի՜ երեւելի. յերգար՝ երկաթ. յերգանել՝ երկայն. յերգընցընել՝ երկայնացանել. յեր-գիւնը՝ երկինք. յերգիի՝ երկրի. յերգնափօր՝ երկնափօր. յեիւել՝ եփել: Ասանց մեծագոյն մասը ուսումնական քառեր են:

4. Յաղորդ քառերուն մէջ և ձայնը ջնջուած է. — գարնալ՝ կարել, կարենալ. երսուե՜ ե-րեսուե. հաղի՜ չայրել. վախնալ՝ վախել, վախենալ. իրգոս՜ երկել:

5. Յաղորդները ջնջուած ե-ի տեղ ունին ք ձայնը. — քաղթընալ՝ պարծենալ, պարծիլ. խըխընել՝ խեղդել. քաղթընգօլ՝ պարծնելուտ. խըխընի՜ աւելել, աւել ածել. ջըխընի՜ ձեղքել. անձընել՜ ածելել: Նոյն փոփոխութիւնը տեղի ունեցած լինելու է նաեւ վուզըրեղ կամ օւ-գըրեղ՝ սոկնիլու և վուզըրաձ կամ օսգըրաձ՝ սոկնիլումը քառերուն մէջ որոնք կ'ենթադրեն հնագոյն *սոկերեղ, սոկերաձ ձեւերը և զե-ղեցիկ համեմատութեամբ կը համաձայնին մեր սոկերիչ քառին —եր-ին ձեռտ:

6. Ե վերածուած է ա-ի աղիւսը՝ եղրայր քառին մէջ. այս ձեւն ունին նաեւ մեր արդի բարբառներէն շատերը:

7. Ե ստացած է ի ձայնը հետեւեալ քա-ռերուն մէջ. իրեք՝ երեք. իրեքշափի՝ երեք-շարթի. իրգոս՜ երկոյ. իրիգզի՜ երիցա-կին. յիգոս՜ լիգու. արգիւել՜ արգելուլ:

8. Հայերէնի ետալ, եղիձ, եղի (գաղձ) քա-ռերը ՍուշաՎայի բարբառին մէջ ստացած են գետալ, լեղիլ, յեղմ ձեւերը: Առայինը ծա-գած է սահմանակաւի փ՝ մասերիկ շփոթու-թեամբ արմատի մաս կարծեմով. թէ եւ նոյն բայական ձեւին դէմ կայ նաեւ յեք գոյա-կանը՝ որ քառին նախատու ե-ը անվթար

պահած է. այսպէս է նաեւ ուրիշ բարբառ-ներու. մէջ. օրինակ պոյսական բարբառով գետալ և յեք. Ասայնեղգի բարբառն ունի սակայն գետալ՝ ետալ և գետաք՝ եռք: Եր-կրորդ՝ որմէ նաեւ լեղիլն՝ եղիլով ձեւքերը արւենել (Չատիկ երկրորդ օրը կատարած ուսմանական սովորութիւն, մուտ գտած է նաեւ ՍուշաՎացի հայոց մէջ), առաջ եկած լինելու է լեղի քառին հետ շփոթութեամբ. այսպէս է նաեւ Ասայնեղգի բարբառով՝ որ լեղիլ՝ եղիձ, լեղիժ մը՝ եղիձ մը (Հմմտ. նաեւ Աս. յրվիլ՝ նուրձ խոտը): Վերջապէս երրորդ յեղմ ձեւը՝ որ (որչափ ինձ ծանօթ է) ուրիշ բարբառներու մէջ չկայ և յատուկ է Սուշա-Վայի բարբառին, ձեւացած է եղի և մեղմ մերձանիչ քառերու խառնուրդով, այն է պա-հելով առաջինին ե-ը և երկրորդէն առնելով վերջաւոր ա-ը:

9. Երկու քառ միայն (օղոնեգ՝ եղունեք և ցօրնի՜ ցերեկ) նախատու ե-ը վերածած են օ-ի:

10. Եւ, եայ երկբարբառներուն վրայ խօ-սուած է արդէն Ո-ի բաժնին մէջ. այստեղ յիշել պէտք է սակայն եօրը և եօրանասուսն բառերը՝ որոնք ինչպէս ուրիշ բարբառներու նոյնպէս նաեւ ՍուշաՎայի գուռառաբարբառին մէջ եղած են օխըր, օխքանասուն:

11. Եւ երկբարբառին ստացած փոփոխու-թիւնները համապատասխան են առ երկրոր-թառին կրած ձեւափոխութիւններուն. Հմմտ. Ա. 11-15: Սա տարբերութեամբ որ եթէ հին Հայերէնի առ-ը կ'ստանայ միայն առ, ալ և ափ ձեւերը, և-ը՝ իր նախաձայն —ին կրկնակ հնչման (է, յէ) պատճառաւ, կ'առ-նենայ դէմ առ դէմ և, էա — եվ, էվ — նֆ, (էֆ) ձեւերը:

12. Եւ կ'ունենայ և (==ieu) հնչումը՝ երբ կը գտնուի բառի մը ծայրը (երբ բառը հո-լովումած կամ նոյնպէս էական բայէն անմի-ջապէս առաջ գրուած չէ): Այսպէս են ցեա՜ ձեւ, զերեւ՜ տերեւ, յեղեւ՜ ետեւ, քե՜ թեւ, սե՜ս, քաղե՜ քարեւ, ողոյն՜ անցերեւ՜ անձրեւ, քերեւ՜ թեթեւ բառերը:

13. Էս նմանապէս կը գտնուի քառին ծայրը. ասոր միակ օրինակն է խե՜ խեւ:

14. Եւ չաղկապը կը հնչուի յեա (կարդա՜ եեռա = գերմ. յeu):

15. Եւ երկբարբառին վերջին մասը մի քիչ խառնալով՝ չ հնչունը կը վերածուի վ հնչա-կան բաղաձայնին, որով երկբարբառը կը ձայնափոխուի էվ, եվ վանկերուն: Այս փո-փոխութիւնը տեղի կ'ունենայ այն ժամանակ երբ և կը գտնուի բառի մէջ ձայնաւորի կամ հնչական բաղաձայնի քով. այսպէս են. ցե-վել՜ ձեւել. ամենեկիմ՜ ամենեւին. հեկալ՜

հեւալ. — արեւելք՝ արեւելք. սեղմա՝ սեւա-
նալ. հօքեկօր՝ հօգեւոր. քերթկնա՝ թեթեւա-
նայ. Նոյնպէս է նաեւ երբ և յանգող բառ
մը հորովուած ժամանակ ձայնաւորի կամ
հնչական բաղաձայնի մը պատահի. այսպէս՝
անցրեկի կամ անցրեկի՝ անձրեւոյ. անցրեկներ՝
անձրեւ. քերթիկ՝ թեթեւոյ և այլն. Նոյն
փոփոխութիւնը տեղի կ'ունենայ իթէ և յան-
գող բառն էական բայէն անմիջապէս առաջ
գտնուի. քերթիկ՝ թեթեւ է. քերթիկ էիր
թեթեւ էիր. խելի էր՝ խել էր:

16. Երրորդ այս հնչական բաղաձայնը
կորսնցնելով իր հնչականութիւնը, կը դառ-
նայ խուլ ֆ-ի, որով և երկարաբառու կը վե-
րածուի նֆ, էֆ վանկին: Այս ձայնափոխու-
թիւնը տեղի կ'ունենայ այն ժամանակ՝ երբ
և բառի մէջ խուլ բաղաձայնի քով կը գտնու-
ուի. օրինակ. քերեւ, քերեկի, բայց քերեկ-
ցունէ՝ թեթեւացուցանել. սեւ, սեկի, սեկցը-
նել սեւացուցանել. հեկալ՝ հեւալ, բայց հեկք՝
հեւք: Այս օրինակները կը ցուցնեն նֆ. մեր
բառարանին մէջ չկրցանք գտնել էֆ ձեւին
համար օրինակ. բայց և՛ էւ — եվ, եվ ձեւե-
րուն համաձեւութիւնը (symétrie) էֆ ձեւին
դէմ մատնանիլ կ'ընէ նաեւ էֆ ձեւ մը. մենք
զայն գրիւք լոկ ենթադրութեամբ. թերեւս
լեզուին առանձնապատուկ բառերուն մէջն
գտնուին մէկ կամ աւելի օրինակներ:

17. Որքանայրի բառը Սուշավայի բարբա-
ռին մէջ եղած է օրջօվարի՝ ուր և երկարա-
բառը յալորդաբար ստացած է եվ կամ եվ
և օվ ձեւերը:

Գ Լ Ո Ւ Խ Է

Է գրին փոփոխութիւններն են.

1. Բառին սկիզբը է. օրինակներն են էշ
և թուրքերէնէ փոխառեալ հէկզ, որ առաջի-
նին համանիլ է. բայց Սուշավայի բարբառը
ուզելով զանազանութիւն մը դնել այդ երկու
բառերուն մէջ, առաջինը յատկացուցած է
լոկ անասունը նշանակելու համար, իսկ եր-
կորդը կը գործածէ իրր ածական «անմիտ,
էշ մարդ» բացատրութեան համար:

2. Բառի մէջ նմանապէս է. օրինակ. քեդզ՝
պէտք. անեցզ՝ անէք. դէր՝ տէր. օրեկը՝
օրէնք. աղվիս՝ աղուէս. շէնք՝ շինու-
թիւն. երեգ՝ երէկ. խափեռքոյռն՝ խաբէու-
թիւն. մեկզ՝ մէջք. դէթի՝ դէպի:

3. Բառի վերջը կան մարգարէ՝ մարգա-
րէ և չէ՝ ոչ բառերը:

4. Ասկէ գատ է կը լինի նաեւ ա, ի, եօ,
որոնց իւրաքանչիւրին համար կայ միայն մէկ
օրինակ. այն է. ռաաքը՝ ուռէքը. գիրազի՝

կիրակէ. շեռն՝ շէն: Վերջինը կը գործածուի
միայն «Ալախա՜ շեռն բահէ՜ Աստուած շէն
պահէ» ստացուածին մէջ և կը թուի թէ
կազմուած է գերմաներէն schön «գեղեցիկ»
բառին նմանողութեամբ:

5. Բացառաբար է—ն է—ի կը վերածեն
միայն երկու բառ ձեւ՝ ծէս, արարողութիւն.
գեր՝ գէր (գերանալ՝ գիրանալ):

ՀԻՍՏԵՄԱՅ Գ. ԱՅԱՌԵԱՆ

Շարայարեկի

ՍԱԳՆԻՍԱԿԱՆ ԲՈՒՆ HYPNOTISME

(Շար. տես էջ 467)

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԻ

Ա. Կայ արդեօք քնացքնելու այս կերպերուն
մէջ ճասարակաց տարբ մը որո՞ւմ վերածուիմ միւս
ըլլոր կերպին: — Բ. Կրնայ ամենայն ոք քնա-
ցքնել: — Գ. Կրնայ ամենայն ոք քնմալ մագմի-
սութեամբ:

ՎԵՐԱԳՈՅՆ տեսանք քնացքնելու
զանազան կերպերը, և թէ յայսմ յաջողե-
լու համար՝ սմանք ուղղակի կը գործածեն
արտաքին զգայարանները, ինչպէս են աչք,
ձեռք, ականջը կամ ջղերը պատուր մարթը.
Իսկ այլը՝ կը գործածեն միանգամայն ար-
տաքին զգայարանները և երեւակայութիւնը.
և այլը՝ միայն երեւակայութեան վրայ կ'ազ-
դեն: Ուրեմն ընդհանուր խօսելով, մագնիսու-
թեամբ քնացքնելու երեք կերպեր կան, զորս
այսպէս կը կոչենք. առաջին՝ մարմնական.
երկրորդ՝ հոգեկան—մարմնական, երրորդ՝ հո-
գեկան, փարիզու մագնիսութեան վարժարանն
նախադրու համարելով մարմնականը՝ զայն կը
գործածեն. Նանսիիւր՝ հոգեկանը. — հոգե-
կան—մարմնականը՝ հասարակաց է, զոր և
Պրէտի համակարծիք եղողներն կը գործա-
դրեն ամէն տեղ: